յայտնի պայմանների հիման վերայ։ Իսկ Հաբիբ ի. Մասլամայ նուաճեց Վիրք։ Սալման ապա գնայ Շարուան, որի իշխանք հնազանդեցան նորան, այնտեղից անցաւ Մասքտաց երկիրը, որի բնակիչք նոյնկերպ վարուեցան։ Նոյն օրինակին հետեւեցին Լակզիների իշխանն, Շապարանի եւ Ֆիլանի ժողովուրդը։ Խազարաց թագաւոր խաքանը պատահեցաւ Սալմանին բազմաթիւ զօրքով Բալանջար գետի մօտ եւ սպանեց նորան եւ 4000 մարդ նորա զօրագնդից։ Օսման նշանակեց Հուզայֆայ ի, Եման Աբսիին կառավարիչ (Հայաստանի վերայ). որին ապա արձակեց եւ նորա փոխարէն դրեց Մուղիր ի. Շոբային։

Մուհամմեդ ի. Մրբուան արշաւեց Հայաստան, որովհետեւ բնակիչք ապստամբել էին, (ոմանց) սպանեց, (ոմանց) գերեց։ Երկրի իշխանք եւ ազատանիք աղերսանօք դիմեցին նորան, եւ նա ներեց նոցա, խոստանալով նոցա (շնորհել) իշխանական աստիճան։ Երբ այս առթիւ նոքա ժողովեցան Խլաթայ գաւառի եկեղեցիներում, նա հրամայեց փայտ կուտել եկեղեցիների շուրջը, փակել դռները եւ այրել եկեղեցիք, հրոյ ճարակ առնելով բոլոր բազմութիւնն։ Մուհամմեդ ի. Մրբուան մնաց Հայաստանում մինչեւ իւր մահը։

102 թ. Օմար ի. Հուբայր պատերազմեցաւ Յունաց հետ Զորբորդ Հայքում եւ հալածեց նոցա, գերելով նոցանից 700 մարդ։

103 թ. Թուրքերը ասպատակեցին Ալանաց երկիրը. նոցա հետ պատերազմեցան Աբդուլռահման ի. Սուլէյման Կալբի եւ Օսման ի. Հայեան Մաբրի։

104 թ. Եղեդ ուղարկեց Ջառռահ ի. Աբդուլլահ Հակամին Թուրքերի դէմ, որ պատերազմեցաւ նոցա հետ, առաւ Բալանջար եւ գերեց մեծ